ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի մասին

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխի 15-րդ և 20-րդ հոդվածներից, «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները» գլխի 56-րդ հոդվածից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026 ծրագրի հիմնադրույթներից, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից և «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ից:

Պետական լեզվաքաղաքականության առկա վիճակը

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.1 հոդվածով պետական լեզվաքաղաքականությունը սահմանվում է որպես «լեզվի բնագավառում պետության ձեռնարկած միջոցառումների ամբողջություն՝ ուղղված պետական լեզվի շահերի պաշտպանությանը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը»: Օրենքի 5-րդ հոդվածով պետական լեզվաքաղաքականության իրականացումը վերապահվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև լիազորված պետական մարմնին:

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում լեզվահարաբերությունները կարգավորվում են պետական լեզվով: Օրենքի նույն հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում երաշխավորվում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով «Պետությունը հայերեն ժեստերի լեզուն ընդունում է որպես հաղորդակցման, ուսուցման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց»: «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված է «ժեստերի լեզու» հասկացությունը: «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության

մասին», «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված են կրթության ու գիտության մեջ լեզվին վերաբերող դրույթները:

Պետական լեզվաքաղաքականությունը, սակայն, որքան էլ բխել է «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից և առանձին ոլորտային օրենքների լեզվին վերաբերող դրույթներից, այն չի ձևակերպվել որպես Հայաստանի Հանրապետության լեզվական միջավայրի կենսագործունեությանն ու զարգացմանն ուղղված միասնական քաղաքականություն, որը կարող է կայուն շարունակականություն ապահովել Հայաստանի Հանրապետության զարգացող սոցիալական կյանքի կարիքներից բխող ոլորտային քաղաքականությունների մշակման և իրականացման համար:

2. Առաջարկվող կարգավորումների բնույթը

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծով հաստատվում է «Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը», որով սահմանվում են պետական լեզվաքաղաքականության միասնական սկզբունքները և չափումները: Այն միտված է աջակցելու Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, պետական-քաղաքական և մշակութային փոփոխություններին դինամիկ կերպով արձագանքող՝ լեզվի բնագավառին վերաբերող, ինչպես նաև լեզվական բաղադրիչ ունեցող ոլորտային քաղաքականությունների և ռազմավարական ծրագրերի մշակմանը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծը մշակել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեն:

4. Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումը միտված է լեզվի բնագավառում միասնական պետական քաղաքականության ձևավորմանը: Միասնական պետական լեզվաքաղաքականությունը կիրականացվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների շրջանակում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համահունչ՝ ապահովելով լեզվական մշակույթի զարգացումը և գրավոր մշակութային ժառանգության պահպանումն ու տարածումը Հայաստանի Հանրապետությունում: Այն ծառայելու է լեզվական բաղադրիչ ունեցող ոլորտային քաղաքականություններում առավել ինտեգրված մոտեցումներ ձևավորելուն, լեզվական բանգավառին վերաբերող՝ Հայաստանի

Հանրապետության սոցիալ-տնտեսական փոփոխություններին համահունչ ռազմավարական ծրագրեր մշակելուն, տեղեկատվության, գիտելիքի և հաղորդակցության արդի, միջազգային առումով մրցունակ լեզվական-հաղորդակցական միջավայր ստեղծելուն, հասարակության մեջ լեզվի սոցիալ-հաղորդակցական դերի հանդեպ գիտելիքի տարածմանը և հետաքրքրություն սերմանելուն:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050», կառավարության 2021-2026 թթ. ծրագրի, ոլորտային և/կամ այլ ռազմավարությունների հետ

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծը բխում է.

– «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի «Մեր ազգային արժեքները» բաժնի 3-րդ կետից, համաձայն որի՝ «Հայոց լեզուն և գրերը, հայ գրականությունը, ներառյալ թարգմանական գրականությունը, գիտելիքը, գիտությունը» սահմանված են որպես ազգային արժեքներ, ինչպես նաև «Մեր ազգային նպատակները» բաժնի 6-րդ կետից, համաձայն որի՝ հայ ժողովրդի ազգային-պետական ինքնության, ինքնուրույնության և ինքնիշխանության պահպանման ու զարգացման մեջ էական տեղ է տրված «հայության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակը» էականորեն բարձրացնելուն:

–2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Սփյուռք» բաժնի «Օտարախոսների համար հայերենի իմացության գնահատման համակարգի ստեղծում» « Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչների ստեղծում և դրանց ներդրման և միջազգային մակարդակում ճանաչման մեխանիզմների մշակում» և «Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչները արևմտահայերենի փոխադրում, ներպետական և միջազգային մակարդակում դրանց ճանաչում» 56.1 և 56.2 կետերի կատարումն ապահովելու նպատակից:

6. Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության առկայության կամ բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

7. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

«Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: